ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԾՆՆԴՅԱՆ 1600-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Նկատի ունենալով հայ գրերի ստեղծող և դպրության հիմնադիր Մեսրոպ Մաշտոցի մատուցած վիթխարի ծառայությունները հայ ժողովրդի կուլտուրայի զարգացման գործում, Հայաստանի Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեն և Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի Մինիստրների Սովետը որոշեցին 1962 թվականի մայիսի երկրորդ կեսին նշել հայ գրերի ստեղծող և հայ դպրության հիմնադիր Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը։

Ստեղծված է այդ նշանավոր տարելիցը անցկացնող Ռեսպուբլիկական հոբելյանական հանձնաժողով, որի նախագահն է Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի նախագահ Ա. Քոչինյանը։ Հանձնաժողովի կազմի մեջ մտել են մեր ռեսպուբլիկայի պարտիական ու պետական գործիչներ, գիտության, գրականության և արվեստի ականավոր ներկայացուցիչներ, հասարակական կազմակերպությունների և մամուլի աշխատողներ։

Քննարկելով այն միջոցառումները, որ նախատեսվում են անցկացնել համաժողովրդական այդ տոնի առթիվ, Ռեսպուբլիկական հոբելյանական հանձնաժողովը որոշեց Մեսրոպ Մաշտոցի ծնդյան 1600-ամյակին նվիրված հանդիսավոր նիստը հրավիրել մայիսի 26-ին, Երևանում։ Հոբելյանական հանդեսին կմասնակցեն հյուրեր Մոսկվայից, Լենինգրադից, միութենական ռեսպուբլիկաներից, ինչպես նաև արտասահմանյան երկրներից։ Հոբելյանական հանդիսավոր նիստեր կհրավիրվեն նաև Լենինականում, Կիրովականում և Աշտարակում։

Հոբելյանի օրերին Հայկական ՍՍՌ շրջանային կենտրոններում, բարձրագույն ուսումնական հաստատություններում, Գիտությունների ակադեմիայում, Երևանի Պետական Մատենադարանում, դպրոցներում կկազմակերպվեն գրական երեկոներ ու զեկուցումներ՝ նվիրված Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակին։

Հատուկ գիտական սեսիաներ տեղի կունենան Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայում և Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտում՝ Մատենադարանում։

Գիտությունների ակադեմիայի Գրականության, Լեզվի, Պատմության, Հնագիտության և ազգագրության ինստիտուտների, Փիլիսոփայության և իրավունքի, Արևելագիտության սեկտորի գիտական աշխատակիցները կկարդան մի շարք զեկուցումներ և գիտական հաղորդումներ («Մեսրոպ Մաշտոցը և հայ գրականության սկզբնավորումը», «Կորյունի «Վարք Մաշտոցի» գիրքը», «Մաշտոցը հայ ժողովրդական բանաստեղծության մեջ», «Հայ գրերի գյուտը եվրոպական և ռուսական հայագիտության գնահատմամբ», «Հայ գրերի տեսակների զարգացումը», «Մեսրոպ Մաշտոցը և նրա ժամանակը», «Մեսրոպ Մաշտոցը և հայ-ասորական կուլտուրական կապերը», «Մեսրոպ Մաշտոցը և V դարի գրաբարը» և այլն)։

Մատենադարանի գիտական սեսիայում կլսվեն զեկուցումներ «Գրերի գյուտը և հայ միջնադարյան բանաստեղծությունը», «Հայ հին թարգմանչական գրականությունը», «Մեսրոպ Մաշտոցի անմիջական աշակերտները», «Հայ տպագրության 450-ամյակը» և այլ թեմաներով։

Հոբելյանի առթիվ Հայաստանի Պետական Հրատարակչությունը, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի և Երևանի Պետական համալսարանի հրատարակչությունները լույս կընծայեն համապատասխան գրքեր ու աշխատություններ։

Ա. Գ.